Մարդը նայում է իւղոտ աչքերով։ Ոգին պլլւում է զիստերին ու մարմինը խորտակւում։

Պերան արեւդարձային, պատահաբար հաստացած ծովային քաղաքների անդուսպ համարձակութիւնը չունի։ Արեւի կիզիչ ակռաների տակ ճզմուած, նա չի մաքառում անկարելի կոկտէյլների հրդեհումով։

Հարթադունդի վրայ, արդի քաղաքակրթութեան նաւթի եւ պողպատի ճանապարհներում նա խենդացած աշտարակ չէ։ Ոսկիի եւ օղիի մէջ բուսած, տեղոտ մի հրէշ, որի ձեռքի մէջ ծածանւում է արշաւանքների անողոք դրօշը։

Պերան կազմուած է փոքրիկ բաներից։ Նա միջակ է եւ անտանելի, վանքից փախած երիտասարդ վանականի աժան լրբութեան նման։

Շնացած ծերունու լրձունք է։ Պոռնկացած Սուսաննայի մսերի վրայ դողդղացող ձեռք։

* * *

Կաֆեների մէջ, ժամերով նստած, բթացած դէմքեր ծուլօրէն նայում են, չգիտես ինչ։

Խորը ընկած կուրծքերի վրայ աննշան ադամանդներ։

Նեղլիկ, «մեծ փողոցի», անցորդը առիթ է փնտռում կանգ առնելու եւ, քիթը օդի մէջ տրորելով, սպասելու։

Կինը աժան է։ Շպարուած դէմքի վրայ ժպիտը մեծ խորշոմներ է բաց անում։ Զիստերը տրորւում են ու շրթունքները վայր ընկնում։

Ամէն ինչ բացօրէն ծախու է, բայց առեւտուրը փոքրաքանակ է եւ մանր։

Զգացումը սանտիմետրով է չափւում՝ վաւաշոտ մատների մէջ շոյուելով։

Դոները կիսաբաց են՝ անձայն եւ սողոսկող ոտնաքայլերի համար։ Խօսում են գլխի եւ յօնքերի շարժումով։ Աչքը հինցած ձիթապտուղի կնճռոտ տեսքն է առնում եւ թուլացած մարմնի իւղերի մէջ լողում։

Գալաթա–Սէրայի դրան մօտ երբեմն կանգ են առնում գլխատած ստուերներ։ Նրանց ոչ ոք չի տեսնում։ Սակայն, բնազդաբար, ամէն մարդ իր քայլը արագացնում է։

Աւելի վեր, Թաքսիմի մօտերը, փողոցը չունչ է առնում, բաց է անում իր բազուկները՝ օղի եւ երգ ծախող փայտաշէն սրճարաններին։ Ցեխերի մէջ վայր ընկած պատռուած կրկնակօշիկի նման մի դուռ։ Խմբագրատուն։ Աղբ եւ երգիծանք։ Այստեղ, եւ դուրսը, ամենաշատ կարդացուած թերթը։

Պոլսում, բոլոր եկեղեցիները պոռնկատներով են շրջապատուած։

Ճահիճի մէջ միջատները բարձրաթռիչք սեւեռում են եւ ամէն ինչ սոսկալիօրէն բնական է։

Բարեբախտաբար, Սկիւտարը կայ, Վոսֆորը, մեր մարտիրոսները կան։

* * *

Բլուրի վրայ, ձորի շուրջը կանգնած մբռայլ նոճիների կատարին, փայտաշէն տունը, ուր բնակում եմ, թառել է խաղաղ՝ խոնարհաբար գլուխը ծռած։

Մէկ կողմից՝ փողոցն է, միւս կողմից՝ ատիճաններով իջնող պարտէզը։ Պարտէզ, եթէ կարելի է այդպէս անուանել... Վարի, կիսաւեր պատից պատահական բոյսերը մագլցում են առատ թուփեր կազմելով, բարձրանում են սալորենիի շուրջը· գրկում են տանձենի եւ կանգ առնում շնչասպառ, վաղուց չխնամուած վարդենիի մօտ։ Աւելի վեր, անորոշ պտուղի մի ծառ, ու ժանգոտած երկաթէ թելի վրայ, թոքախտաւոր մի որթ, որը չգիտես ինչպէս, կարողանում է իր գոյութիւնը պաշտպանել, հարեւան հաւերի յարձակումների դէմ։ Գրեթէ տան մօտ, կէս փլած, քարեշէն մի աղբիւր՝ հինաւուրց յիշատակների մընացորդ, բայց որի ջրով առատօրէն սնանում են տան, փտած փայտերի վրայ մագլցող բազմաթիւ վարդերը։

Պարտէզի կողմի պատուհանների առջեւ Վոսֆորը մի վայրկեան լճանում է, հեռաւոր երազանք ձեւացնում, դոյնզդոյն քարեղէններով զարդարւում, ու կորչում է շրջապատող բլուրների առատ կանանչների մէջ։

Հակառակ կողմից փողոցը, թշուառ, երեսի վրայ ընկած մի անցք, որ եղերում է այրըուած թաղամասի փլատակները, ժամանակին գեղեցիկ, դրքերով եւ թանկարժէք յիշատակներով լեցուն, տուներ են եղել։ Ամէն պատուհանից, պատմում են բնակիչները, դաշնամուրի ձայն էր լսւում· վառվռուն երիտասարդու-

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան